



Քաղ. գործ թիվ ՇԴ/0263/02/13

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

<<17>> հուլիսի 2013թ.

ք.Գյումրի

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

նախագահությամբ՝ դատավոր	Լիլիթ Խաչատրյանի
քարտուղարությամբ՝	Գայանե Հարությունյանի
մասնակցությամբ՝	
հայցվոր՝	Գ.Փարկիթյանի
պատասխանող՝	Վ.Ստեփանյանի
	Լ.Ստեփանյանի
պատասխանողների	
ներկայացուցիչներ՝	Գ.Բաղդասարյանի
	Ա.Հախվեղյանի
	Ռ.Մուրադյանի

դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Գայանե Վոլոդյայի Փարկիթյանի (ծնված՝ 17.06.1962թ., ՌԴ քաղաքացու անձնագիր՝ 3553384, տրված՝ 21.05.2008թ., հասցեն՝ ք. Գյումրի, Անտառավան 3 թաղ., 25ա շենք, բն. 46) ընդդեմ Վոլոդյա Եղիշի Ստեփանյանի (անձնագիր՝ AC 0638938, տրված՝ 04.11.1998թ. 016-ի կողմից, հասցեն՝ ք. Գյումրի, 230/169 տնակ), Լյուբա Մինասի Ստեփանյանի (ծնված՝ 15.12.1939թ., անձնագիր՝ AC 0638938, տրված՝ 04.02.1999թ., հաշվառված՝ ք. Գյումրի, Անտառավան 3 թաղ., 25ա շենք, բն. 46 հասցեում), ՀՀ Շիրակի մարզպետարանի, երրորդ անձ Գյումրիում ՌԴ գլխավոր հյուպատոսարանի՝ պարտավորությունը կատարելու ու բնակմակերես տրամադրելուն հարկադրելու պահանջի մասին.

Պ Ա Ր Զ Ե Յ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր Գայանե Փարկիթյանը 2013թ. մարտի 13-ին դիմել է դատարան, խնդրելով պարտավորեցնել պատասխանող Վոլոդյա Ստեփանյանին՝ իրեն և որդուն՝ Կոլյա Հակոբի Փարկիթյանին, ք. Գյումրի, Անտառավան 3-րդ թաղ., 25ա շենքի թիվ 46 բնակարանից բաժին ապահովելու նախկինում ապահովված 17.48քմ-ի դիմաց:

18.03.2013թ. Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից հայցադիմումն ընդունվել է վարույթ և կիրառվել է քաղաքացիական գործը դատաքննության նախապատրաստելու կանոնները:

28.03.2013թ. պատասխանող Վոլոդյա Ստեփանյանը դատարան է ներկայացրել հայցադիմումի պատասխան:

03.04.2013թ. երրորդ անձ Գյումրիում ՌԴ գլխավոր հյուպատոսարանը դատարան է ներկայացրել առարկություն:

16.04.2013թ. դատական նիստի արձանագրային որոշմամբ երրորդ անձ ՀՀ Շիրակի մարզպետարանը ներգրավվել է որպես պատասխանող:

15.05.2013թ. դատական նիստի արձանագրային որոշմամբ Լյուբա Ստեփանյանը սույն գործով ներգրավվել է որպես պատասխանող:

20.05.2013թ. պատասխանող Լյուբա Ստեփանյանը դատարան է ներկայացրել հայցադիմումի պատասխան:

19.06.2013թ. դատարանի որոշմամբ քաղաքացիական գործը նշանակվել է դատաքննության:

Երրորդ անձ Գյումրիում ՌԴ գլխավոր հյուպատոսարանի ներկայացուցիչը պատշաճ կարգով ծանուցվել է դատական նիստերի ժամանակի և վայրի մասին, սակայն դատական նիստերին չի ներկայացել:

Դատարանը համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118 հոդվածի՝ գործը քննության է առել երրորդ անձի ներկայացուցչի բացակայությամբ:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Դիմելով դատարան, Գայանե Փարկիթյանը հայտնել է, որ ժողդեպուտատների

որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին: Ըստ հայցի՝ պատասխանող հանդիսացել է Շիրակի մարզպետարանը:

ՇՄ առաջին ատանի դատարանի դատավոր Հ.Ենոքյանը 01.08.2006թ. հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում է կայացրել, գործի քննությունը նշանակվել է առանց հաստատված ներկայացրած և հասցե արձեռնել 20.11.2006թ. չ՛

գումար՝ իրեն բնակմակերես հատկացնելու պայմանով, որը չի արել, սակայն նշված հանգամանքի վերաբերյալ դատարանին որևէ ապացույց չի ներկայացրել:

Ինչ վերաբերում է հայցվորի կողմից դատարան ներկայացրած 23.04.1986թ. Լենինական քաղաքի Շիրակի շրջանի ժողդատարանի որոշմանը, 25.12.2007թ. Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի թիվ 2-3416 գործով վճռին, թիվ ԱԲ 042663 մահվան վկայականին, 13.04.1986թ. Լենինականի Շիրակի շրջանի ժողդատարանի որոշմանը, 21.08.1986թ. Շիրակի շրջանի ժողդատավորի կողմից տրված գրությանը, ՄՄՀՄ դատախազության կողմից տրված գրությանը, 19.01.1987թ. Լենինականի Շիրակի շրջանի դատախազի կողմից տրված գրությանը, թիվ 2-699 գործով կատարողական թերթին, Վոլոդյա Ստեփանյանի կողմից 21.07.2006թ. դատարան ներկայացրած հայցադիմումին, թիվ 04-602 գործով հայցն առանց քննության թողնելու մասին որոշմանը, 01.08.2006թ. դիմումը վարույթ ընդունելու մասին որոշմանը, 24.12.2012թ. <<Պ.Ա.Գ. Էսթեյթ>> ՄՊ ընկերության կողմից տրված եզրակացությանը, ապա դատարանը գտնում է, որ դրանք սույն պահանջին վերաբերելի չեն, ուստի գնահատման չի արժանացնում:

Ելնելով վերոգրյալից դատարանը գտնում է, որ հայցվորի հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին, դատարանը գտնում է, որ այդ հարցը պետք է համարել լուծված՝ քանի որ հայցվորի կողմից հայցադիմումը դատարան է ներկայացվել սահմանված չափով պետական տուրքի վճարմամբ, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68 հոդվածի համաձայն՝ անտեսան